Պարույր Սևակ

Անմահները հրամայում են

Նրա՛նք, որոնց հետ ես պայքարել եմ մարտում,
Ապրել նահանջ, գրոհ և հաղթություն պայծառ,
Նրա՛նք, ովքեր սակայն, ավա՜ղ, չդարձան տուն,
Երբ աղետը կանխվեց, ու վտանգը անցավ,-
Նրա՛նք - բազմակերպար, նրա՛նք - բազմալեզու,
Տարբեր հողո՛վ, ջրո՛վ, տարբեր գույնո՛վ անգամ,
Սակայն որոնց շրթից նույն գալիքն է խոսում,
Որպես սրտագիտակ և հարազատ թարգման,-
Նրանք ներս են գալիս առանց բախմա՛ն, անձա՛յն,
Երբ հյուրընկալ, ծանոթ իմ սենյակում
Լռությունը, իբրև անձեռակերտ արձան,
Կիսաբաց գրքերի նիրհն է հսկում:
Երբ նստած եմ լինում հոգնատանջ ու տխուր,
Ինքս ինձնից դժգոհ, չվաստակած,
Երբ տենչած երգի տեղ՝ հովն է դուռս բախում
Ու կորչում է, իբրև ծաղր ու կատակ...
Իբրև ջերմ ներշնչանք և հղացում հարուստ
Այցելում են նրանք հենց այդ պահին հանկարծ,
Իրենց ներկայությամբ անխոս հրամայում,
Պահանջում են ինձնից իրենց երգը չերգած:
Երգն այն, որ ծնվել է խոնավ խրամատում,

Ջերմել հայրենի տան հրդեհներից,
Ահագնացել նրանց հաղթական ու հատու՝
Ողջ Եվրոպան չափած ոտնաձայնից...
***
Նրանց փառքով, ինչպես իմով փառավորված,
Աչքս հառած նրանց անցած ճանապարհին՝
Ես ապրում եմ թեկուզ տենդով ամենօրյա,
Աննախադեպ կյանքով ու խնդությամբ գալիք:
Թեկուզ մաքրվում է, սիրտս սրբագործվում
Նրանց թափած արյան անեղծությամբ,
Եվ չծնված երգս նրանց արյամբ օծվում,
Նրանց արյան նման դառնում է թանկ,-
Բայց դժվար է դառնում մարմին տալ այդ երգին,
Անմահության երգին տալ հնչյուն ու բարբառ,
Եվ ես տվայտելով՝ մոայլվում եմ կրկին
Անզորության տանջող գիտակցությամբ:
Իսկ այդ պահին նրանք այցելում են զվարթ.
Ինչպես հաղթանակած մարտից հետո,
Եվ հայացքո՛վ, ժպտո՛վ, խոսքերո՛վ անվհատ
Փարատում են հոգիս կասկածներից պղտոր:
Ասես ասում են ինձ եղբայրորեն զվարթ.
-Եղիր նույնքան համառ, որքան մարտում,
Մի՛ վարանիր, ընկեր, մի՛ երկմտիր բնավ,
Այլ կերպ չէինք հաղթի և չե՛ն հաղթում:
Զգա շունչը դարի երակներո՞վ, արյա՛մբ,
Մեր արյան պես եղիր վառ ու անմեռ,
Հիշի՛ր, որ միասին մենք փրկել ենք համայն
Աշխարհի բախտը և կփրկենք դեռ:
Հիշի՛ր և փառ՞ք տուր մեզ, ընկածներիս բոլոր,
Փա՛ռքը երգիր նաև ապրողներիդ,

Եղիր երգի մեջ էլ, ինչպես մարտում՝ հերոս:
Սիրի՛ր, բայց թշնամուն մտաբերի՛ր:
Երգիր խրո՛խտ ու վե՛հ, ինչպես մարտի պահին
Եվ փխրո՛ւն՝ տուն հղված նամակի պես,
Եվ որդուն սպասող մոր պես մեղմ ու բարի,
Եվ զինվորի նման պարզ ու անկեղծ...
Երգի՛ր, բայց կռվե՛լը... չմոռանա՛ս, ընկե՛ր,
Ա՛յդ են մեռածները...
Այստեղ ահով
Ընդհատում եմ նրանց այս խոսքը բոցարյուն,
Եվ գոչում երդումի նման հանդիսավոր.
-Ո՛չ, այդ անմահներն են հրամայում...

25.X.1946թ.
Երևան